

սարակ ամենուն կարեկցութեւն չիւթ ըլլալով, կրողները այն հարուածներէ ազատ եղողներուն փութովը մասամբ մը մխիթարուեցան:

Կարելի չէր յուսալ նաև որ Աստուած եղանակաց խառնակութենէն աւանը բոլորովին ազատ ընէր. ուստի քանի մը անյաջող տարիներ ալ վրայ եկան և շատերը իրենց սկսած ձեռնարկութեանցը մէջ տագնապեցնելով, և բովանդակ աւանին կերպ մը վերանորոգութեան աշխատութեանցը մէջ վրայ գալով շատ աւելի ծանր եղան: Ամէն ձեռք զարնուած արուեստից ճարտարութեանց մէջ ալ հաւասարապէս չը յաջողեցան. անկարելի էր որ գործունէութեան ետեւէն վհատութիւն չը գար, որոնք չըջանով մը գոգցես փոփոխակի իրարու կը յաջորդեն. և անոնք որ աղէկ հիմն դրած չէին՝ բոլորովին լքան:

Ուրեմն Միբրպոյի յաջողութեամբ զարգանալուն ժամանակ տագնապողական պարագաներ ալ պակաս չեղան, բայց զանոնք բժիշկը նախատեսեց՝ էր, որով ամենեւին չխռովեցաւ. այն դժուարին վայրկեաններուն մէջ վհատեալները քաջալերելու համար կրկնապատիկ գործունէութիւն ցուցուց. և իրեն խրախոյսը կերպով մը կ'աւելնար այնպիսի փորձանաց ժամանակ: Առժամանակեայ ձախորդութենէ չէր

վախնար, վասն զի երբեք միտքը դրած չէր որ յարատև յաջողութիւն պիտի ունենայ. այնպիսի ժամանակները հանգիստ առնելու վայրկեաններ կը սեպէր որով մարդիկ կրկին ուժ կը ստանան՝ ի յառաջադիմութիւն սլանալու համար:

Աւանին համար մէկ վտանգէ մը միայն կը վախնար, այն է՝ ախտից տեղիք գտնալէն. ուստի ամենայն ճգամբ կը ջանար այսպիսի ապագայ չարիքներէ պահպանել. ոչինչ ընդհատ կը վախնար նաև սխալ գաղափարաց մուտք գտնելէն, զորոնք իբրև հարուած ընկերութեան կը համարէր: Վրիպակ կարծեաց աւանին հասուցած ֆնասովը, այն է երկայն ժամանակ աղքատութեան և թմրածութեան մէջ բռնելովը, կը գուշակէր ուրիշ նոյնպիսի մոլար գաղափարաց հասցընելիք չարիքը, մէյմը որ բնակչաց մտքին մէջ սպըրդելու ըլլային: Հետեաբար կը ջանար ուրեմն կրթութիւնը տարածելու. այնպէս հեռուէն բռներ էր որ դեռ շատ մոլորութեանց և նախապաշարմանց դէմ պէտք էր կռուիլ:

Սակայն եկեղեցւոյն քով թողած ընկերութեան դառնանք:

ՌԱԲԷ

Կը շարունակուի:

Մենաւարտութիւն Տանկրեդեայ ընդ Կլորինդայ եւ մկրտել զնա ի կարելիէր մահուն¹:

Վազեն առ սեամս երկոքին, եւ զհետ նոցա տագնապափոյթ Հրոսեն ըշտապաւ հեղեղասաստ գունդք փռանկաց:

¹ Մի է առաջիկայս 'ի հրաշալի գրուագաց անմահանուն քերթուածոյն Դաստոյի, յորոյ 'ի պատճառս կանխաբանելով պարտիմք ասել զի Կլորինդա այն ինչ իմացեալ է յԱրսեսեայ 'ի ծերունի սպասաւորէ իւրմէ զլինել իւր դուստր Սերապեայ քրիստոսակրօն թագաւորին Եթովպիոյ, և զի մայրն առ ահի անդէն 'ի սկզբնաբոյս

հասակին անկնունք 'ի նա յանձն է արարեալ զորդի իւր աղաչելով զի մկրտեսցէ, զոր առ հեթանոսութեանն ապախտ արարեալ էր Արսեսի: Սակայն յանուրջս կշտամբեալ և 'ի վերջոյ ուրեմն խրատեալ փութալ 'ի խնդրելին, աղաչէ զԿլորինդա յետս կալ 'ի խորհրդոց իւրոց և չվտանգել զանձն: Անաստէ նա բանից խնամաւ

Հարկանէ Սիւլէյման յետս ընկըրկեալ զամենեաին ,
Եւ հանդէպ երեսաց կըլորինդայ փակին դըրունք :

Սա լոկ մընաց արտաքոյ . զի ի պահու ընդ դուռն անցից
Արտաքս արչաւասոյր խաղայր ըզհետ Արիմոնեայ ,
Գաղանացեալ սըրտմըտութեամբ տալ վէրս փոխան ընդ հարուածոյն .
Եւ խոցեաց , մինչ Արգանտէ չգիտէր ըզնա ի դուրս ելեալ .
Ձի զարթուն խնամբս սըրտի եւ ըզտեսիլ՝ բարձին յաչաց
Մարտ խաղմին , ամբոխ արանց , մառախլապատ երկինք համբուն :

Այլ մինչ յարեան ոսոխին զիջանէր բոց սըրտին տապոյ ,
Եւ յանձին լեալ ըզգաստ զ՝ առականեալ էին դըրունք ,
Եւ զիւրեւ դունդք թըշնամեաց , կերպարանէր իբր ըզմեռեալ :
Բայց ի միտսն անկաւ անդէն նորահընար գիւտ փըրկութեան ,
Տեսեալ զի ոչ խէթ ինչ բընաւ ըզնրմանէ գոյր ոսոխին .
Ի նոսա կեղծաւորէր , եւ 'նդ անծանօթ գըրոհ մարդկան
Խառնէր զանձըն խաղաղիկ յամենեցուն անդէտ մըտաց :

Որպէս գայլ անմըռունչ յետ եղեռան ծածուկ գործոյ
Դարձ արարեալ գայ յանտառն եւ զարտուղի գընայ շաւիղ ,
Այսպէս եւ կոյսըն զանխուլ երթայր ի ճեմնն եւ յառաջէր ,
Օգնական ի թէկն առեալ զաղմուկ գընդին , զօդոց մըռայլ :
Դէպ եղեւ սակայն լոկ զի ծանիցէ ըզնա Տանկրի²
Որ վայրիկ մի յառաջ եկեալ հասեալ էր ի տեղին :
Մինչ այն ինչ կոյսըն զԱրիմոն էարկ յերկիր յօրհաս մահու ,
Ետես նա , եւ զհետ կըրթէր արչաւակի դէտ ակն արկեալ :

Շահատակել ի հանդէս ցանկայ ընդ իւր ի փորձ զինուց ,
Կարծեցեալ զոք արժանի իբր ի կըլիռ անձին ուժոյ :
Պատ առեալ գընայ կոյսն ընդ ափափայ ծագըս լերանց
Առ այլ դուռնն մըտից ուստ անցանել եղեալ էր դէմ .
Մոլեգին գայ նա ընդ հետ , մինչ զի հեռուստ իսկ քաջ ի բաց
Լըսի զինուցըն շառաչիւն . կոյսն ի թիկունս անդր հայեցեալ
« Ո՛վ այր դու , գոչէ , զի՛նչ ածել քեզ , հիմ արչաւել » :
Եւ նորա՝ « Ըզխաղմ եւ մահ , կըրկնեալ անդրէն պատասխանի » .

Ծուին և առնացի զրահաւորեալ ելանէ ընդ Ար-
գանտեայ արտաքս 'ի քաղաքէն և 'ի միասին հրոյ
ճարակ տան զաշտարակն . թափին 'ի վերայ քրիս-
տոնեայք բազմաձեռն գնդօք . սոքա երկոքեան
մարտուցեալ յետս նահանջին . բանայ Սիւլէյ-
ման զմի 'ի գրանց քաղաքին որում 'ի պահ կայր
և վազէն առ սեամս երկոքին :

2 Բայց ոչ զի Ալորինդա իցէ՝ որոյ կաթոգին
էր 'ի սէր , այլ իբր 'ի թշնամեաց դք : — Ջանուն
քաջի զօրավարին Տանկրեդեայ , ըստ մերոյս Վար-
դանայ պատմչի , և ըստ ներեղոյ քերթողական
ազատութեան համարձակեցաք յուղղական գնել
Տանկրի :

«Խաղժ՝ եւ մահ կալցեն ըզքեզ, տաց զոր ցանկասըդ քեզ ընդ հուպ»,
կոյսն առնէ բանին դարձուած, կացեալ այնպէս պինդ ի տեղով:
Տեսեալ Տանկրեդեայ հետեւամարտ ըզթըշնամին
Իջանէ յերկվարէն՝ ոչ կամեցեալ ըզձին վարել:
Մերկանան երկոքեան ըզսուր երկաթն ի պատենից.
Բորբոքեալ գոռոզութեամբ, վառեալք ի հուր գոռ զայրութի
Հանդիպել երթան միմեանց, համբուն ըստ տիպ նրմանութեան
Նախանձարեկ զոյդ ցըլուց ի բարկութիւն բորբ բըրդելոց: —

Լուսաճաճանչ արեգին եւ համայն իսկ թատերց տեսլեան
Գործք արժանիք արդարեւ էին դռին յիշատակաց.
Այլ գու, Գիշեր, խաւարամած որ ի ծոցիդ խոր մըթութեան
Զայդ արդիւնս արութեան արկեր յաւերժ մոռացութիւն,
Տուր ինձ օն հանել զնոսին ի լոյս տունջեան գերապայծառ
Եւ ազգաց եկելոց ի գիտութիւն տալ ծանօթի:
Կեցցէ հըռչակ համբաւոյն, եւ ի հանդէս նոցին փառաց
Փայլեսցէ խաւարին վըսեմափառ քոյ յիշատակ: —

Ոչ խընդրեն խուտափել, նահանջել ինչ կամ կալ ի բաց.
Ոչ հնարից հանճարոյ կըցորդութիւն է անդանօր.
Ոչ գիտեն հարուածս ի կեղծ, որ կըշռակի եւ որ ի շեշտ.
Ի մոլելոյ եւ յըստուերաց լինի ապախտ արուեստ ճարտար:
Կոփիւնք ահեղ սուսերաց հընչեն ընդ կումբս երկաթակուռ.
Անյողդողդ նոքին 'ի կայս, ոտք ամրապինդ եւ ձեռն ի գործ.
Ոչ հարուածոց է վըրէպ, ոչ սուսերաց չկահիւն ի զուր:

Բորբոքեալ վառէ ամօթ ըզբարկութիւն ի վրէժ քինու,
Այլ եւ քէն վրէժխընդիր ըզպատկառանսն արծարծանէ.
Թորդեռանդըն զայրոյթ եւ հանգամանք նորանորոգ.
Առաւելուն ըզհարուածս եւ ցանդ զըշտապ տագնապելոյ:
Աղմըկեալ գամ քան ըզգամ եւ առ ի նեղ անկեալ մարտին,
Բաղխեն զիրեարս բըռընցի՝ ոչ օգնելով սուր առ 'ի գործ.
Մարտուցեալ վահանաւ, գըլխանոցօք, ժանդք եւ անգութ:

Կորովի բազկօք ըզկոյսն երիցս ասպետն ի ծոց պընդէր,
Որ եւ երիցս հոսէր զանձն ի կապանացըն խըստութեան.
Ի կապանաց ոչ սիրելոյ՝ այլ ոսոխին գոռոզասիրտ:
Անդրէն զերկաթ արկեալք ի գործ եւ թաթաւեն ի վէրս յորով.
Հուսկ ուրեմըն շընչասպառ եւ երկոքեան վաստակաբեկք
Սակաւ մի նահանջին յաշխատութեանց առնուլ ոգի:

Ամբարձեալ զաչս յիրեարս եւ ըզբեռինըս ծանրութեան
Հաստատեն անգոր մարմնոց յեց սուսերաց յերախակալս :
Այն ինչ շողք վերջոտնէին յետին աստեղըն գիշերոյ
ի նախկին լոյս տուընջեան ցայտեալ յերեսս արեւելից ,
Զախոյեանն ետես Տանկրի լըցեալ արեան բիւր հոսանգք .
Սոնքացեալ խընդաց ի սիրտ յանձին կորովըս հայեցեալ : —
Ո՛վ մըտացս յիմարութեան զամէն գովեալ բաղդի շընորհս :

Եղո՛ւկ քեզ . ըզմէ խընդաս . քանի տըխուր գոն յաղթանակք ,
Եւ բանիցդ այդ պարծանաց քանի ողորմ է կատարած .
Զի աչկունքդ այդ քոյին՝ թէ կեալ ի կեանս հանդուրժիցես ,
Ընդ մէն մի շիթս արեան վըճարեացեն ծովս արտասուաց : —
Անմըռունչ առ վայր մի կացեալ այնպէս պիշ հայեցիւք
Հանդեան 'ի վաստակոց մենամարտիկըն արիւնոռոգ :
Ուր ուրեմըն Տանկրեդեայ ըզլըռութիւնն հատեալ երկար ,
Զայս խօսի յունկըն կուսին՝ որ զի զանուն իւր ծանուցէ :

« Մեզ այս բաղդ եհաս դըժնեայ՝ զի ի հանդէս մըխեալ ուժոյ ,
Եւ լըռութիւն աստանօր զայնս ընդ քօղով արկցէ զանխուլ .
Այլ քանզի վըճիւռ անգութ ճակատագրին ոչ շընորհէ
Վըկայս ըստ արժանի քաջարութեանց եւ դըրուատիս ,
Աղաչեմ , թէ ընդ զինուք աղաչանաց իցէ օրէն ,
Մերկասցիս դու առ իս զանուն քոյին՝ զկենաց վիճակ ,
Իմանալ հաւաստի՝ յաղթող բնաւին իմ կամ յաղթեալ ,
Թէ յուամէ փառաւորեալ օրհաս մահուս կամ յաղթութիւն » :

« Քեզ ընդ վայր է խընդրել , վայրազն ընդդէմ առնէ դարձուած ,
Զոր ցարդ յամենեցուն պահել զանխուլ սովորեցայ :
Այլ զի կայ իմ եւ քո . զի նըկատես դու յանդիման
Յերկուց զոք որ զաշտարակըն բարձրաբերձ ետուն հըրոյ » :
Տանկրեդեայ ընդ այս բան կայծակնացայտ սըրտմըտութեամբ՝
« Դըժպատեհ դիպար ժամու ոգել բարբառ , յաւել ասել .
Ի խընդիր վըիժուց հըրապուրեն զոգիս իմ արդ ,
Խուժադուժ բարբարոս , բարբառ քոյին եւ լըռութիւն : »

Զայրոյթն ի սիրտս անկեալ անդրէն դըրգուէ ի ռազմ ըզպարտասեալս :
Ո՛վ մարտին գազանութեան , ուստ արուեստի գործ տարագիր ,
Ուր սպառեալ ոյժ բոլոր եւ մոլութիւն կըռուի փոխան :
Քանի սուսերքդ այդդիկ՝ յո՛ եւ ուստեք թէ թօթափեալ ,
Լայնածաւալ բանան վէրս արեանց՝ ի զէն եւ ի մարմնի .

Եւ թէ կեան դեռ՝ սրբամըտութիւն լոկ ըզնոցուն կեանքս զօդէ :

Ջերդ Էգեանն անդընդախոր, եթէ լրռեն հիւսիս՝ հարաւ ,
Որ յուզեալ գամ մի յառաջ ամբոխեցին կուտակադէզ ,
Չեւ իսպառ անդորրացեալ , զի տակաւին ճօճին երեսք ,
Լըսելի առնէ ըզձայն ըստուար ալեացքն կոծելոց .
Նոյն եւ յարեանցքն թափուրք՝ թէ պակասէ ոյժ զօրութեան
Որով վէրս եղին միմեանց , դիմագրաւեն ի բիւր վըտանգս
Սըրտեռանդն աշխուժիւք վառ ի նախկին կատաղութիւն :

Բայց արդ աւանիկ հասեալ ժամուն մահաբերի
Ջի կենացքն վախճան ճակատագրեալ կըլորինդայ :
Սայրասուր մըխեալ քաջին զերկաթն ի ծոցըն դեղանի
Մըտանէ խոր ի ներքս յագեալ յարեանն արբեցութիւն :
Ջերմաջերմ լըցան ի դետ համայն հանդերձքն ոսկեհուռ ,
Դեռաբուսիկ որ զըստինսըն պընդէին զիրդ եւ փափուկ :
Ըզգացեալ անդէն կուսին ըզմահաբեր հարուածն յինքեան
Ծընկօք կըթուցելովք կայր թալկացեալ ոգի զոգւով :

Իսկ յառաջ զօրավարին վարեալ անձին ըզյաղթութիւն
Եւ ոտընհար ըսպառնալեօք ձըգէ յերկիր ըզկոյսըն խոց :
Չեւ յերկիր թաւալեալ ի հեծեծանս աղիողորմ
Ըզվերջին խօսսըն մընչէր նորոգատուր աղդմամբ հոգւոյն ,
Հաւատոյ՝ յուսոյ՝ սիրոյ , աստուածաձիր պարզեւ շնորհաց ,
Ջի հանգիցէ յաղախնութիւն ըստամբակեալն ընդ կեանս յամայր :

« Յաղթեցեր , բարեկամ . թողեալ իմ քեզ , թող ինձ եւ դու .
Ոչ մարմնոյս արիութեան , այլ ո՛հ , աւաղ , հոգւոյս իմ լոկ .
Դու ընդ այնր աղօթեա՝ մըկըրտութեամբ սըրբեալ ըզմեղս : »
Այդպիսի մեղմ մըրմունջք ողորանօք հընչեալ ախորժ
Գորովեն ըզսիրտ քաջին , եւ անցուցեալ զսրբամըտութիւն
Լուծանեն զականողիս յորդոր ի լալ եւ յարտասուս :

Ոչ հեռի ի վայրացն անդ ի ծոցոյ բըղխեալ լերին
Յորձանօք խոխոջաձայն վազէր դընայր վըտակ փոքրիկ .
Փութացեալ անդէն քաջին լընու ի ջուր ըզսաղաւարտն
Եւ դառնայ տըխրազգեաց յըսպանն ի մեծ բարեպաշտօն .
Այլ ըզճակատն անձանօթ այն ինչ պարզեալ եւ նըշմարէր ,
Ըզդողանի ձեռքն հարան՝ կայր ըզտեղեաւն արձանացեալ
Անբարբառ ի լըռութեան , քանզի ետես անդ եւ ծանեաւ .
Ո՛վ ծանօթութիւն , ո՛վ հանդիպումն տեսութեան :

Այլ ի պահուն զօրացեալ բոլոր ուժով պինդ ի սրտին
Կեայր ժուժայր տակաւ ի կեանս, եւ ոգորեալ ընդ վիշտս ոգւոյն,
Ջոր մահացոյցըն յերկաթ՝ փոխել ի կեանս փութայր ջրբով:
Այն ինչ քաջին աւարտեալ եռանդագին զաղօթսն սուրբ,
Կոյսն առ խինդ լըցեալ սրտին ժըմիտ յերեսսն փայլեցոյց.
Եւ ասել թուէր ի մահուն թեթեւաթուիչ եւ բերկրալիր՝
Ահա բանան ինձ երկինք, խաղաղութեան գընամ զուզի:

Դալուկըն գեղեցիկ մածեալ յերեսսն ձիւնափայլ,
Շուշանին որպէս ի փունջ խառն յեռեալ թէ մանիչակը,
Բեւեռեալ ունէր յերկինս զարտեւանունս ականողեաց,
Եւ երկինք ընդ արեւու խանդաղատեալ թուէին հայել:
Յըրտագին ըզմերկ ձեռն յասպետն ի վեր անդր ամբարձեալ
Եւ գըրաւ ընդ բանից մատուցանէր խաղաղութեան:
Այսպէս ի քուն զերդ յանդորրու կոյսըն հանգեալ հըրաշագեղ:

ԴԱՍՍԱՅ. ԵՐՈՒՍԱՂԷՄ ԱԶԱՏԵԱԼ. ԵՐԳ ԺԲ.

ԹԱՐԳՄ. Հ. Դ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ.

ՀՐԱԽԱՂԳ¹

Մեր օրերուն Եւրոպայի մէջ ամեն
ազգային հանդիսից զարդն ու գոգցես
վերջաբանը կը սեպուին հրային խաղե-
րու տեսարաններ, որոնք նաեւ առ-
հասարակ ամենայն կարգի ժողովր-
դեան ամենամեծ հաճոյք և զուարճու-
թիւն կը պատճառեն: Առաւօտանց կա-
նուխ բազմաթիւ ամբոխ մարդկան կը
խռնին հրարուեստական հրաշալեաց
հրապարակին մէջ, և օրն 'ի բուն ան-
համբերաբար կը սպասեն որպէս զի
հոյակապ գլեակները, լուսացայտ աղ-
բիւրները և հրաթև աղօրիները տես-
նեն: Բաւական է որ մէկը Հռովմայ Ս.
Պետրոսի տօնախմբութե՛ն կամ Բարիզի
Նաբոլէոնի տօնին լուսաւորութե՛ն հան-
դէսին ականատես կամ ականջալուր
եղած ըլլայ, իսկոյն ըսածնուս ճշմար-
տութեանը կը վկայէ: Համառօտ մը

տեսնենք ուրեմն այս զարմանալի ա-
րուեստիս սկզբնաւորութիւնն և գաղտ-
նիքը:

Կը կարծուի թէ Չինացիք շատ հին
ժամանակէ 'ի վեր կատարելապէս հրա-
խաղուց արուեստը գիտէին. նոյն-
պէս շատերը կը հաստատեն թէ արևե-
լեան Հնդկաստանի մէջ ալ գունաւոր
բոցեր յառաջ բերող այրելի նիւթեր
կը գործածէին տեղացիք, որոնց բա-
ղադրութիւնը շատ դարերէ 'ի վեր ա-
ւանդութեամբ հասած էր իրենց:

Սակայն Եւրոպայի մէջ հրախաղու-
թիւնը թնդանօթի վառօդոյն սովորա-
կան ըլլալէն ետքը սկսաւ, և իտալա-
ցիք առաջինը եղան այս նոր արուես-
տիս ձեռք զարնողներուն մէջ: Ժամա-
նակագիրք կը պատմեն որ 1450ին
Բարթոլոմէոս Գարոլինի անուամբ մէ-
կը Փլորենտիա կանչուեցաւ Կոզմոս տի
Մէտիչիէն, և այս դ.քսին ըրած մէկ
հանդիսին առթովը, Տանդէի քեր-
թուածէն շատ տեսարաններ հանդի-
սացուց:

¹ Գլ. Pyrotechnie.